

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

<< ԶՐԱՓԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳԴՊՐՈՑ >>
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՑ

Հարգածան մարզպետ


Կից ներկայացնում եմ <<Զրափիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի համար մրցույթի հայտարարության տեքստը և քաղվածք կառավարման խորհրդի 23.05.2019 թվականին կայացած նիստի՝ թիվ 57 արձանագրությունից ;

<< Զրափիի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նախագահ՝
27.05.2019թ.



Մ. Գևորգյան



ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի մայիսի 23 թիվ 57 նիստի արձանագրությունից

Սիստին մասնակցում էին խորհրդի ութ անդամներից վեցը, բացակա՝ Վանիկ Սերոբյան, Համազասպ Սարտիրոսյան

Օրակարգում՝

1. ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:/Զեկուցող՝ խորհրդի նախագահ Մ.Գևորգյան/

Զեկուցողը նշեց, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթով՝ ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2019թ. հունիսի 11-ից մինչև 2019 թ հուլիսի 11-ը հայտարարել մրցույթ:

2. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:

3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց /06-ը հունիսի 2019թ./ առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության կառավարման պետական լիազորված մարմնին:

4. Մրցույթ հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակել ԶԼՄ-ներում և azdarar.am կայքում /06.06.2019թ. առաջին, 11.06.2019թ. երկրորդ/:

5. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի հուլիսի 22-ին ժամը 14⁰⁰-ին:


6. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի քարտուղար Շ.Ստեփանյանի վրա:

Մրցույթին մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի Ջրափիի միջնակարգ դպրոցում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 11.06.2019թ. մինչև 11.07.2019թ. ընկած ժամանակահատվածում՝ ժամը 10⁰⁰- 15⁰⁰:

Որոշումն ընդունվեց միաձայն՝ կողմ-6, դեմ-0

ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝



Մ.Գևորգյան

27.05.2019թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
 - 2) բարձրագույն կրթությունը,
 - 3) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/:
- Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- 1) Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,
- 3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
- 4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն

երեք օր առաջ/,

5) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /դրանց առկայության դեպքում/,

6) Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները համեմատվում են բնօրինակների հետ, իսկ բնօրինակները վերադարձվում են հավակնորդին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է փաստաթղթերը ներկայացնել Ջրափիի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդին:

Փաստաթղթերն ընդունվում են Ջրափիի միջնակարգ դպրոցում՝ 11.06.2019թ.-ից մինչև 11.07.2019թ.-ը ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:


Մրցույթը տեղի կունենա 2019թ. հուլիսի 22-ին, ժամը 14:00-ին՝ Ջրափիի միջնակարգ դպրոցում:

Մանրամասների հետ ծանոթանալ ՀՀ Շիրակի մարզի Ջրափիի միջնակարգ դպրոցում /հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ գ, Ջրափի 7-րդ փողոց շենք 19:

հեռ. /098 68-87-90/

ՀՀ Շիրակի մարզի «Ջրափիի միջնակարգ դպրոց»

ՂՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝



Մ. Գևորգյան